«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
Non-governmental organization "Armenian Lawyers' Association"
Общественная организация "Армянская ассоциация юристов"

ՀՀ, ք. Երևան 0010, Նալբանդյան 7, գրասենյակ 2
7 Nalbandyan Str., Suite 2, Yerevan 0010, RA
РА, Ереван 0010, ул. Налбандяна 7, офис 2

(+374 10) 540199
info@armla.am

№ 04/93
«11» 12 2025 թ.

ՀՀ ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանին

Հարգելի տիկին Սարգսյան,

Սույնով ներկայացնում ենք «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի հայտը՝ ՀՀ ՆԳ նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ներգրավվելու նպատակով։

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը (ԻՀԱ) հիմնադրվել է 1995 թվականին և գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից սահմանված կարգով։

Կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Նալբանդյան 7, 2-րդ գրասենյակ։ Հեռախոսահամարն է՝ +374540199։

ԻՀԱ-ն շուրջ երեք տասնամյակ գործում է որպես կայացած և ինստիտուցիոնալ կարողություններ ունեցող փորձագիտական կառույց՝ իրականացնելով ծրագրեր, նախաձեռնություններ և հանրային վերահսկողության մեխանիզմներ, որոնք ուղղված են տարբեր ոլորտներում բարեփոխումների առաջմղմանը։

Կազմակերպության փորձառության և իրականացրած համապատասխան ծրագրերի մասին տեղեկատվությունը ներկայացված է կից։

Խորհրդի աշխատանքներին մասնակցելու համար ներկայացնում ենք կազմակերպության փոխնախագահ Մարատ Ատովմյանի թեկնածությունը։ Ստորև ներկայացնում ենք թեկնածուի վերաբերյալ անհրաժեշտ տվյալները.

- Էլեկտրոնային փոստի հասցե՝ matovmyan@gmail.com,
- Հեռախոսահամար՝ +37494 846035

Սույնով ԻՀԱ-ն հաստատում է իր պատրաստակամությունը՝ ակտիվ և արդյունավետ մասնակցելու ՀՀ ՆԳ նախարարին կից հասարակական խորհրդի աշխատանքներին, նպաստելու ոլորտային քաղաքականությունների բարելավմանը, հանրային վերահսկողության և մասնավոր հատվածի ներգրավվածության ամրապնդմանը, ինչպես նաև աջակցելու խորհրդի նպատակների արդյունավետ իրականացմանը՝ հիմնված ԻՀԱ-ի կուտակած փորձի, մասնագիտական ներուժի և իրականացված ծրագրերի արդյունավետության վրա։

Հասարակական խորհրդի կազմում ներգրավվելու սույն հայտնի կից ներկայացնում ենք՝

1. ԻՀԱ-ի կանոնադրության լուսապատճեն
2. ԻՀԱ-ի վերաբերյալ ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Պետական միասնական գրանցամատյանից քաղվածք առ 30.06.2020,
3. Վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն երեք տարվա գործունեության փորձի և այդ ժամանակահատվածում իրականացրած առնվազն երկու ծրագրերի մասին տեղեկատվություն
4. Ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի լուսապատճեն

Հարգանքով՝

Կարեն Զադոյան

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ